միմյանց ձեռքերից բռնած, քավորը նրանց գլխին պիտի պահեր մեկ ձեռքով խաչն ու Ավետարանը, մյուսով՝ թուրը պատյանից չբաժանված։ Վերջինս պիտի պահպաներ և շար ոգիների մերձենալուց։ Կարգի ժամանակ քաֆվորի ու քաֆուռու ձեռներին կամ պարանոցներին կապում էին կանաչ-կարմիրը՝ նարոտը։

Եկեղեցուց հրսանէքը շարժվում էր դեպի աղջկա տունը։ Այս սովորությունը բնորոշ է Զանգեզուրի համար, մինչդեռ այլ հայաբնակ գավառներում եկեղեցուց ուղղակի դիմում են տղայի տունը։ Սա մի մնացորդ է մայրիշխանության ժամանակներից, երբ տղան դառնում էր կնոջ ընտանիքի անդամ։

Վերադառնում էին ոչ այն ճանապարհով, որով եկել էին, այլ անպատճառ ուրիշ ճանապարհով, սակայն կրկին միշտ մրկրոնէրավ շրջապատված։ Այս ադաթը տարածված էր և այլ վայրերում՝ թե՛ հայերի և թե՛ կովկասյան այլ ժողովուրդների մեջ, ինչպես և ավելի հեռավոր երկրներում[44]։ Նա պիտի բացատրվի այն նախնական մտայնությամբ, թե նորապսակներին ամեն տեղ վտանգ է սպառնում շար ոգիներից, որոնք անշուշտ հավաքված կլինեն առաջին անգամ անցած ճանապարհին և վերադարձողներին այնտեղ սպասելիս։

Բարեկամ տների առջևից անցնելիս այդ տներից թիֆա՝ բաժին էր դուրս բերվում—օղի, գինի, ձվածեղ, եղ ու մեղր և հրամցվում նախ և առաջ նորապսակներին և ապա բոլոր հարսնէվորնէրին։ Սա նշան էր այն բանի, որ բարեկամներն էլ ընդունում են այդ նոր զույգը իրենց տոհմի կազմի մեջ և ուրախությունը ոչ թե մեկ օջախի ուրախություն է, այլ ամբողջ ասկի։ Նույնն էր ապացուցվում այն բանով, որ հարսի տնից հացկերույթից հետո ցրվելով, բարեկամ հարսնէվորնէրը հաճախ հավաքվում էին իրենցից մեկի մոտ և այնտեղ քեֆը շարունակում։

Աղջկա հոր տանը նորահարսը գնում էր կրկին փարդայի ետևը, իսկ տղամարդկանց համար մատուցվում էր առատ սեղան, որին շատ անգամ սպասավորում էր սաղինէրի հետ և ինքը նորափեսան։ Տղայի ծնողները ներկա չէին լինում։ Նույն թամադան, նույն կենացները։ Հյուրերի ցրվելուց հետո սեղան էին նստում առանձին-առանձին նորափեսան իր սաղինների հետ, նորահարսը իր ընկերուհիների հետ. հրավիրյալ կանայքն էլ առանձին. մինչդեռ մրկրոնէրը դուրսը զուռնա-ղավալավ պարում, երգում, գոտեմարտում էին։ Հացից հետո, երբ մնում էին միայն մոտիկ բարեկամներն ու մրկրոնէրը, ցույց էին տալիս պէժինքը, պաժինքը։ Թմբկահարը իրերը մեկ-մեկ վերցնելով բարձրաձայն հայտարարում էր.

«Թաֆվոր, քաֆվորի մրկրոնէր, ասսու հրամանը՝ ձեզ հրաման. խնամին քաֆվորի-քաֆուռու սէրին՝ սիրուն տվավ այս ինչը վերմակ, գաբան, բարձ և այլն»։

Սրանով կարծես հրապարակորեն ստուգվում էր, թե արդյո՞ք խնամին կատարել էր իր նախօրոք տված խոսքը, միաժամանակ վավերացվում էր թե աղջիկն ի՛նչ է տանում իր հետ իբրև անբաժան սեփականություն։ Մի քանի գյուղերում[45] այդ ստուգումը կատարվում էր ոչ թե աղջկա, այլ տղայի տանը։

Ուշ գիշեր մրկրոնէրն էլ էին ցրվում։ Մնում էին թագավորի հետ կրկին

---

44 Տե՛ս Чурсин Г. Ф., նշված աշխ., էջ 239 и Лалаян Е., Ванский вилайет, СМОМПК, вып. XLIV, отд. II, էջ 42։

45 Գորիսի շրջան։